



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

22 հունվարի 2019 թվականի թիվ 4-Ա

ք. Երևան

«ՇԱՐԿ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԱԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմում-բողոքի հիման վրա 2018 թվականի դեկտեմբերի 20-ին հարուցված թիվ 6 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

2018 թվականի դեկտեմբերի 20-ին Հանձնաժողով մուտքագրված «Սոլիդ Փարթներ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Իրավատեր) դիմում-բողոքում նշված է «ՇԱՐԿ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից խախտում կատարելու փաստի վերաբերյալ: Ըստ դիմողի՝ Ընկերության կողմից «5-րդ ալիք» հեռուստաընկերության եթերում 2018 թվականի դեկտեմբերի 12-ին ցուցադրվել է «KILL THE IRISHMAN/IRISHMAN» («ИРЛАНДЕЦ» 1X106 ԱՄՆ 2010թ.) ֆիլմը՝ առանց իրավատիրոջ թույլտվության ձեռքբերման, իսկ նշված ֆիլմի ցուցադրման բացառիկ իրավունքը Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է Իրավատիրոջը:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Ընկերությունը 14. 01. 2019թ-ի թիվ 01-19 գրությամբ ներկայացրել է իր պարզաբանումը:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, տեղեկատվության բնագավառը կարգավորող այլ իրավական ակտերը և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ գույքային իրավունքներն ապահովում են հեղինակի նյութական շահերը՝ տալով հեղինակին բացառիկ իրավունք՝ թույլատրելու կամ արգելելու իր ստեղծագործության կամ դրա օրինակների օգտագործումը:

Հեղինակը բացառիկ իրավունք ունի օգտագործելու իր ստեղծագործությունը ցանկացած ձևով և եղանակով, ինչպես նաև երրորդ անձանց թույլատրելու կամ արգելելու դրա օգտագործումը:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հեղինակային բացառիկ պայմանագրով իրավատերն օգտագործողին է փոխանցում ստեղծագործությունը որոշակի ժամկետում ու պայմանագրով նախատեսված սահմաններում օգտագործելու բացառիկ իրավունքը՝ պահպանելով ստեղծագործության օգտագործման իրավունքն այն մասով, որը նախատեսված է պայմանագրով: Այս դեպքում այլ անձանց կողմից ստեղծագործության օգտագործումն արգելելու իրավունքը կարող է իրականացնել իրավատերը, եթե դա չի կատարում օգտագործողը:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքով պահպանվող ստեղծագործության կամ դրա էական մասի կամ հարակից իրավունքների օբյեկտի ցանկացած օգտագործում անօրինական է, եթե նախապես, մինչև նման օգտագործումը ձեռք չի բերվել հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավաստիքոջ թույլտվությունը:

Ստեղծագործության էական մաս է համարվում ստեղծագործության որևէ մասը, որը սովյալ ստեղծագործությանը ծանոթ ցանկացած անձ ինքնուրույն կարող է նույնականացնել որպես այդ ստեղծագործության մաս:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը, որը չի կատարում սույն օրենքի պահանջները, համարվում է հեղինակային իրավունքը կամ հարակից իրավունքները խախտող:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ոչ սեփական հեռուստառադիոհաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում:

Հեռուստառադիոհաղորդման արտադրության և հեղինակի մասին տեղեկատվության (ենթագրեր, ձայնային ներկայացում) ամբողջական հեռարձակումը պարտադիր է:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների, լիցենզիայի պայմանների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումների կրկնակի դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին Հանձնաժողովին գրավոր տեղեկացնելու դեպքում Հանձնաժողովը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, Հանձնաժողովն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ

մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների կրկնակի դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած հեռուստառադիոընկերությանը՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով, 39-րդ հոդվածի 4-րդ մասով, 65-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով, 58-րդ հոդվածի 1-ին մասով և 59-րդ հոդվածով սահմանված դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. «ՇԱՐԿ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ գրավոր նախազգուշացում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Գ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆ

22 հունվարի 2019թ.

ք. Երևան